ցանէր, թէպէտ գիտակ իսկ ես, ամա այսպիսի եղեալ ոչ էր իսկի. քանզի մարդոյ գլուխ գերեզմանն անցեր եւ Համա՛ Համուս թալաներ են, Համուս՛ ութ, և Համա՛ հինգ եւ պծեծն ասելի ի վերայ Նոյա. հրամանքդ գիտես, ճար մի արա։

Գրեցաւ փետուարի ժդ. յաւուր Տեառնընդառաջի [1667]։ *Անարհեստ յետնեալ Նիկօլս՝ այաք թուրապխս մի մոռանայր։ Ըստամպօլու Աստուածածնայ ժամուն երեսփոխան Քրիստոսատուրի տաճիկ եղբայրն, որ Մորայ խաղնայի հետն էր, խաղնա աղասուն քէհիին քէհեան է, եկաւ յԵրուսաղէմ յԸստամպօլու, մէսաւու մի հանեց՝ թէ երեք չորս աճէմ կախեցին. զսուտն եւ զիրաւն ոչ գիտեմք եւ ոչ պատճառն։*

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

ՈՒՂՂԵԼԻՔ. — 1940 տարւոյ Սիոնի մէջ երես 315ր. տող 38՝ **Վ.արդանաւ** կարդալ՝ **Վ.արդանս**։ երես 317ր. տող 44՝ **անուն մի** կարդալ **անուն իմ**։ երես 318ա. տող 23՝ **գիտեմ** կարդալ **գտանեմ**։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Սուրբ Աթոռոյս Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը 1941 Յունուար 16 եւ 17 թըւականով հետեւեալ երկու հեռագիրները ընդունեցաւ Ամենայն Հայոց Հայրապետութեան Տեղակալ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսէ՝ Երեւանէն տրուած.

«Կը խնդրենք հեռագրել Փարիզ՝ Էսմէրեանին, որ անմիջապէս կատարուի Եւրոպայի թեմերու երեք պատգամաւորներու ընտրութիւնը: Հետեւանքի մասին տեղեկացուցէք՝ հանդերձ լուսաբանութեամբ»:

«Կը խնդրենք հեռագրել Գահիրէի, Պաղտատի, Աթէնքի, Սէլանիկի եւ Մարսէյլի առաջնորդարաններուն, որ անմիջապէս ընտրեն իրենց պատգամաւորները: Հետեւանքի մասին հեռագրով տեղեկացուցէք Էջմիածին՝ հանդերձ լուսաբանութեամբ»:

Ս. Պատրիարքը Տեղակալ Սրբազանի սոյն յանձնարարութեանց համաձայն, հեռագիրներ ուղղեց յիշեալ առաջնորդարաններուն եւ Փարիզի Եկեղեցական Վարչութեան ատենապետ Տիար Պօղոս Էսմէրեանի, որ ներկայիս կը գտնուի Վիշի, եւ այս մասին հեռագրով տեղեկացուց Ս. Էջմիածին:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, 16 Հոկտ. 1940ին, լանջախաչ կրելու արտօնութիւն շնորհած էր, 1934ին՝ Հոգելոյս Տ. Թորգոմ Պատրիարքէն վարդապետական ձեռնադրութիւն ընդունած չորս միաբան վարդապետներէն (Պարոյր Վրդ. Մինասեան, Յուսիկ Վրդ. Աւետիսեան, Պասկ Վրդ. Թումայեան եւ Միւռոն Վրդ. Կրճիկեան) վերջին երեքին: Հոգ. Տ. Պարոյր Վրդ., Կիպրոսի Մելգոնեան հաստատութեան Հոգեւոր-Հովիւ, եւ գաղութին առաջնորդական փոխանորդ եղած միջոցին, ընդունած էր արդէն լանջախաչ կրելու արտօնութիւնը, երջանկայիշատակ Տ. Սահակ Վեհ. Հայրապետի հրամանաւ, եւ Ս. Աթոռոյս Ամեն. Ս. Պատրիարք Հօր հաւանութեամբ:

ՏՕՆԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

* 1 Դեկտ. Կիր. — *Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Քարոզեց Տ. Պարգեւ Վրդ.՝ բնաբան առնելով հետեւեալ խօսքը. «Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան, շնորհք եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն»։ Ցոյց տուաւ Հին Օրէնքը իբրեւ աստուածային պատուիրաններու ամբողջութիւն, իսկ Նորը՝ գերազանց միջոց փրկութեան և ազատագրման։ Նոր Ուխտը հոգեւոր առաքինութեանց գործադրութիւնը կը պահանջէ։ Օրէնքը պահելով՝ յարգած կ'ըլլանք մեր ներքին եւ բարոյական կեանքը։*

* 4 Դեկտ. Դշ. — Ս. Կուսի Ընծայման *տօնին առթիւ, Միաբանութիւն եւ աշակերտութիւն, հակառակ աննպաստ եղանակին եւ անձրեւին, չքերթով իջան Գեթսեմանիի ձորը։ Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Հրաշափառ»ով մուտքը Աստուածածնայ Տաճարէն ներս։ Ապա մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ. որու ընթացքին քարոզեց Տ. Սերովբէ Վրդ.՝ բացատրելով ընծայաբերութեան նշանակութիւնը իբրեւ իւրացում Աստուծոյ կամքին, իբրեւ պատրաստակամութիւն՝ տեղ տալու, իր սրտին մէջ, Աստուծմէ բխող զգացումներու։ Եւ ներկայացուց Ս. Կոյսը իր առօրեայ կեանքին մէջ իսկ, ուր իր խօսակցութիւնները Աստուծոյ զգացումով են լեցուած, որուն պատճառաւ իսկ արժանի եղաւ հաւատացեալներու եւ Աստուծոյ Որդւոյն մայրութեան պատիւին։*

* 8 Դեկտ. Կիր. — *Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Քարոզեց Տ. Շաւարշ Վրդ.՝*

digitised by A.R.A.R.@